դարձավ նրանց չարությունը: Քանզի Օվսեն, որին տվին Բուրսան, ասաց՝ ես ծնունդով ու սնունդով անդրիանացի եմ, իմ հայրենի քաղաքը ինձ տուր: Թագավորն ասում է՝ ինչ որ քեզ եմ տվել, դու նրա վրա իշխիր, չէ՞ որ դու որևէ քաղաքի վրա իշխանություն չունես: Օվսեն ասում է՝ ես իմ հայրենիքը ուրիշի չեմ տա: Այս բանի վրա առաջացավ աղմուկ ու կռիվ: Թագավորը (Սողոնը) հրամայեց Օվսեին գետնին գցել և բրածեծել: Այնքան ծեծեցին նրան, մինչև որ կիսամեռ եղավ, ապա դուրս քաշեցին:

Ուրբաթ գիշեր էր, բոլոր մահմեդականները գնում էին մզկիթ աղոթելու, իսկ հրեա Օվսեն կամաց-կամաց գնաց մինչև ավագ մզկիթը, որտեղ փաշան էր գալիս աղոթելու, և ընկավ մզկիթի դռանը: Լուսանալիս մոլլաները եկան ու տեսան հրեային, ասացին՝ ել և այստեղից գնա, որովհետև ահա փաշան գալիս է: Հրեան ասում է՝ փաշային ասելու բան ունեմ, որ մեծ օգուտ կլինի ձեր ազգին: Թույլ տվին, մինչև որ փաշան աղոթի, ապա հրեային տարան փաշայի մոտ: Գնաց, համբուրեց փաշայի ոտքերը, նստեց նրա մոտ և ամբողջը մի առ մի հավելումով պատմեց:

Փաշան լսեց, սարսռաց նրա մարմինը, և հարցրեց, թե որքա՞ն ժամանակ է, որ այդ խորհուրդը արել են: Հրեան ասում է՝ տասնհինգ օր է: Փաշան հարցնում է. որքա՞ն մարդ է ծառայում նրան: Հրեան ասում է՝ տասներկու մարդ միշտ ամեն երեկո գալիս են մինչև մյուս երեկո ուտում, խմում են և խորհուրդ են անում: Սրանք գնում են, ուրիշներն են գալիս, նույնն են անում: Բայց այս երեկո շատերն են գալու վաղվա համար, որ շաբաթ է, և դուրս չեն գալիս, ինչ որ չար բան խոսելու են, վաղն են խոսելու:

Ապա փաշան մեծամեծներից շատերին կանչեց և ասաց՝ պատրաստ եղեք, քանզի առավոտ լուսանալիս հրեայի հետ գնալու ենք յահուդիներին* բռնելու: Լուսանալիս իրենց առջև գցեցին հրեային, գնացին այնտեղ, որտեղ նրանք հավաքված էին իրենց թագավորի հետ: Մտան տունը տեսան, որ թագավորը բազմել էր բարձր գահին: Մահմեդականների գլխավորը ասաց՝ իջիր այդտեղից, քանզի փաշան քեզ է պահանջում: Նա որ կամենում էր թագավորել և մահմեդականներին կոտորել, ահա այժմ դողում ու վրվրթում էր և բեկբեկուն ձայնով աղաչում էր և կամենում էր հագուստները հանել: Բայց չթողին, այլ բոլորի ձեռքերը կապեցին հետևները, առան, տարան փաշայի մոտ: Փաշան բոլորին հարցաքննեց և ստույգ տեղեկացավ: Ապա հրամայեց կոտորել նրանց, իսկ Խախամի* լեզուն, քիթը, շրթունքները, ականջները, ձեռքերի ու ոտքերի մատները, ամորձիները՝ ամենը հրամայեց կտրել:

*Հրեաներ:

Մունետիկներին ասաց, որ բարձր ձայնով կանչեն, թե ամեն ոք թող լսի մեր ձայները, թե քրիստոնյաներ, թե մահմեդականներ, հարձակվեք հրեական ազգի վրա, մեծամեծերին կոտորեք, մանուկներին գերեք, նրանց կանանց պղծելով խայտառակեք, նրանց ունեցվածքը ավարեք, հափշտակեք, մի խնայեք: Իսկ ով որ նրանցից ունեցվածք հափշտակի, իրենն է, թող չխնայվի նաև նրանց կյանքը: Ամենքդ լսեք մեծ փաշայի հրամանները:

Եվ քանի որ օրը շաբաթ էր, բոլոր հրեաները տանն էին: Ով մունետիկի ձայնը լսեց, արեց այնպես, ինպես լսեց: Այն օրը կոտորեցին հրեաների երեք մասը և մինչև երեք օր բոլորին սպառեցին: Նրանցից շատերը մահմեդականացան, շատերն էլ խառնվեցին քրիստոնյաների հետ, մի մասն էլ ելավ քաղաքից փախավ, մի մասն իր ունեցվածքը հանձնեց քրիստոնյաներին, թաքչում էին նրանց տներում: Այսպես նրանք ողորմելի մահով սպառվեցին:

Նրանց ունեցվածքով շատերը ճոխացան և դարձան հարուստ: Այն կույսերը, որ պահում էին մեսիայի համար, հանին տարան փաշայի մոտ, որ տասներկուսն էին, հրապարակավ պղծեցին: Փաշան իրեն բաժին առավ նրանց թագավորի տունը, անթիվ ու անհամար ոսկու և արծաթի գանձեր, ապա գրություն գրեց, պատճենը ուղարկեց թագավորին:

Այս պատճառով թագավորն իր բոլոր հպատակներին գրեց, թե որտեղ լինեն հրեաները իր իշխանության ներքո, մեծ հարկեր դնեն նրանց վրա, որպեսզի չքավորանան և չլրբանան: Այսպես տանջեցին հրեաներին բազմաթիվ ու տեսակ-տեսակ հարկապահանջությամբ:

Թեպետ մենք այս լսել ենք ուրիշից, բայց ոչ լրիվ ճիշտ: Զմյուռնիայից ես նավով գնացի Կոստանդնուպոլիս, այս ինձ պատմեց Յենի անունով, որ Հոհանն է, մի հոռոմ սարկավագ, որ Սալենիկ քաղաքից էր:

*Հրեաների կրոնապետը: